Ընդրոնիկոս չար ծերն Թագաւորեաց և հալածեաց զեշխանսն. և կամէր սպանանել զԳիսիկ իշխանն՝ որ էր յազգէն Թագաւորաց. զոր իմացեալ Գիսիկ՝ ծանոյց զօրացն, և հասեալ կոտատեցին 'ի ծովն, և զմնացեալն այրեցին հրով։

Գիսիկն՝ Սահակ Թարգմանի։ Զամանաւ զօրացն էօծ զնա Պատրիարքն՝ Թագաւոր. բայց ոչ դադարեցաւ հեղումն արեանց 'ի տանէ Յունաց մինչև սպառեցան, քանզի արժան էին. վասնայն կրեցին զբաժակ պատուհասի ի ՈԼ. Գ. Թուին Զայոց. և զի Թէպէտ ոմանք Թագաւորեցին, այլ աղօտ անուամբ՝ և ոչ զօրութեամբ. զոր և մեք Թողցուք զմանրախուզութիւն, և կալցուք զԹագակալութիւն դաւաղանին երկաթեայ Պայսերաց. զոր անդէն յառաջնումն 'ի Զ. Գ. երրորդ համար Թագաւորացն 'ի բաց Թողաք՝ զհետ լինելով Յունաց Թագաւորացն. որ և խոստացաքդառ-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան